



Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱԾՆՁԻ ԳՐԱԳԻՐ ՏՊԱԳԻՐ ՄԵԿԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հարուստ և բազմատեսակ է մեր եկեղեցական մատենագրությունը, որի կարևոր և հիմնական մեկ ճյուղն է հանդիսանում մեկնողական գրականությունը:

Մեր մատենագիրների, պատմիչների և ձեռագրերի վկայության համաձայն, ունեցել ենք շուրջ երեսուն «Աստվածաշունչ գրոց հմուտք և ճարտարք, քաշատեղեակք Աստուածաշունչ բնագրաց և մեկնչաց», որոնք իրենց մեկնողական ստեղծագործություններով հարստացրել են մեր մատենագրությունը:

Եթե ի դարից սկսած մեր հոգևոր բանաստեղծության ներկայացուցիչները, մեր քերթողներն ու երաժիշտները, շարականագիրներն ու տաղասացները զգծորանս Հոգւոյն Սրբոյ արբին յիմանալի աղբերէն և երդեցին ի ժամանակս ի ժամանակս», ապա Ս. Գրոց վերծանողներն ու մեկնիչները զարդարեցին տնօրինաբար զիմաստս Անեղին, հաստատելով յերկրի զգիր կենդանի, հովուել զհօտ նոր Խարայէլի»:

Ոսկանյան Աստվածաշնչի տպագրության 300-ամյակի առիթով փորձենք մի ընդհանուր և համառոտ ակնարկի մեջ ամփոփել մեր մեկնողական գրականության առավել աչքի ընկնող և տպագրված ստեղծագոր-

ծությունները, մինչև ժՔ դար, ներսես Լամբրոնացի:

Ոսկանյան Աստվածաշնչի տպագրության 300-ամյակը հայ մշակույթի պատմության մեջ հանդիսանում է խոշոր իրադարձություն, իր հոգևոր, մշակութային և ազգային նշանակությամբ:

Հայկական տպագրությունը Սահակ-Մեսրոպյան հրաշքի շարունակությունն էր հայ կյանքում՝ ամենատարբեր ձևերով և դրսևորումներով:

Հայ դպրության սկզբնավորության, մեր հոգևոր, մշակութային կյանքի զարգացման բնագավառում, վճռական ու բարերար է եղել Աստվածաշնչի դերն ու նշանակությունը: Դժվար է գտնել անցյալի հայ մշակույթի, եկեղեցական արվեստի, գրականության, երաժշտության, փիլիսոփայության, պատմագրության, իրավունքի ու վարքագրության որևէ ստեղծագործություն, որի վրա նշմարելի չլինի Աստվածաշնչի ազդեցությունը՝ «Բացեալ աղբիւրն Գիտութեանն Աստուծոյ» (Կորյուն):

Աստվածաշնչի թարգմանությունը նոր հորիզոններ է բացում հայ ստեղծագործ մտքի առաջ: Հայ ժողովուրդն իր հոգին, իր միտքը

լալնորեն բացում է քրիստոնեական լույսին և մշակույթին, հաղորդակից դառնում ընդհանուր եկեղեցու մեջ մշակված գիտության, դրականության:

Աստվածաշնչի Սահակ-Մսրոպյան թարգմանության մեջ «Հայաբարբառ, հայրենախօս» են դառնում Հին և Նոր Կտակարանների գրքերը, Մովսիսի, մարգարեների, Պողոսի և մյուս առաքյալների դործերը:

Աստվածաշնչի թարգմանության մեջ հայ ժողովուրդը առժամային վաղվադակի ամենայն իրացն եղելուց խելամուտ լինելը, ... և յառաջագոյն յալիտենիցն և ապա եկելուցն, սկզբանն և կատարածի և ամենայն աստուածատուր աւանդութեանց» (Կորյուն):

Աստվածաշնչի թարգմանության զուգընթաց Ս. Սահակն ու Ս. Մսրոպը և մեր թարգմանիչ վարդապետները հայերենի են վերածում նաև ծիսական, ժամապաշտական գրքեր, (ժամագիրք, պատարագամատույց, տոնական), որոնք անհրաժեշտ էին եկեղեցու գործնական կարիքների համար: Սույն թարգմանությունները հավանաբար կատարվել են ավելի վաղ, ըստ Կորյունի վկայության, և միայն Ս. Սահակի ձեռքով. «Երանելոյն Սահակայ զեկեղեցական գրոց զումարութիւնն կանխա ի յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ»:

Թարգմանված գրքերի մեջ էին նաև եկեղեցական հայրերի դավանաբանական դրվածքները՝ «զեայրապետաց սրբոց ճշմարիտ զմաստութիւնն» և բազում շնորհագիր հայրերի ավանդություններ:

Թարգմանական աշխատանքների մեջ, սակայն, Աստվածաշնչի թարգմանությունից հետո, մեծ տեղ էր հատկացված Ս. Գրքի մեկնություններին: Կորյունն իր անձնական վկայությունն է բերում, գործին որպես մասնակից-ականատես, երբ գրում է «Ս. Սահակն հանդերձ Եղնակալ» (Աստուածաշնչի) զյառաջագոյն, զյանկարծագիտ, զփութանակի զթարգմանութիւնս հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք և շատ ևս մեկնութիւն գրոց թարգմանէին»:

Ե դարում, քրիստոնեական ամբողջ մշակույթն ու գիտությունը, ուսուցումը հիմնվել էին Աստվածաշնչի վրա: «Աստվածաշնչի վրա ուսում էին տալիս, իսկապես Աստվածաշունչ էին սովորեցնում: Դա և՛ ընթերցանության, և՛ կրոնի գիրք էր» (Մ. Աբեղյան՝ Հայոց հին դրականության պատմություն, հատ. Ա, Երեւան, 1944, էջ 88):

Աստվածաշնչի թարգմանության շնորհիվ մարդիկ ծանոթանում էին Ս. Գրքի բազմազան բովանդակության: Բայց պետք էր ուղղափառ մտքով հասկանալ և կարդալ Աստվածաշունչը: Դրա համար անհրաժեշտ էր

դառնում Ս. Գրոց մեկնությունը, բացատրությունը:

Աստվածաշնչի թարգմանության մեջ հայոց աշխարհում մի նոր սերունդ էր պատրաստվել, որը սերտորեն կապված էր Ս. Գրքին. «այնպես տոգորված նրանով, որ նրանից բաժանվելն այլևս անհնարին պիտի լիներ: Սրանով արդեն մեծ հեղաշրջում էր մտնում հայ կյանքի և մտածողության մեջ» (Մ. Աբեղյան՝ անդ, էջ 90): Դրա փայլուն ապացույցն այն էր, որ Վարդան Մամիկոնյանը, ըստ Եղիշեի վկայության, 451 թվականի Ավարայրի ճակատամարտից առաջ, իր գործերին խրախուսելու համար կարդում և բացատրում էր «Մակաբայեցուց» գրքերը:

Սեր եկեղեցական մատենադրության ամենատարածված գրական տեսակը Ս. Գրոց մեկնությունն էր, Աստվածաշնչի բացատրությունը:

Ե դարում ընդհանուր եկեղեցական դրականության ամենատարածված դրական տեսակը նույնպես մեկնությունն էր:

4-րդ—5-րդ դարերում, երբ զարգանում ու ծաղկում էին ընդհանրական եկեղեցու ծոցում աստվածաբանական գիտությունն ու քրիստոսաբանությունը իրենց ղիխավոր ուղղություններով և բնորոշ հատկություններով, գրական կարևոր տեսակներից կամ ուղղություններից հիմնականը Աստվածաշնչի մեկնությունն էր, բնագրի ուսումնասիրությունները և Ս. Գրոց հիմունքները: Մեկնությունը՝ Աստվածաշունչը, նրա բովանդակությունը, հասկացողությունները, հետազոտելու, բացատրելու, և հաստատելու մեթոդ էր:

Աստվածաշունչը ուսումնասիրվում էր երեք նպատակներով՝

1. որպես Աստծու հայտնված, բացարձակ ճշմարտությունը, խոսքը:

2. որպես քրիստոնեական հավատքի վարդապետության կանոն:

3. որպես աղբյուր աստվածաբանության, քրիստոնեական մտածողության և գիտության:

Հորք էր դրված՝ ոչ միայն հավատալ Աստվածաշնչի բովանդակությանը, հայտնությանը, այլ նաև բացատրել, գիտենալ, տալ հավատքի բովանդակությունը: Այդ դժվարին ու պատասխանատու գործը կատարում էր մեկնությունը՝ փիլիսոփայական, գիտական հիմնավորումներով:

Եկեղեցու հայրերի համար Աստվածաշնչի մեկնությունն աստվածաբանության, քրիստոսաբանության սկիզբն էր և վախճանը: Աստվածաշնչի մեկնության մեջ պարզվում, հստակվում էին եկեղեցու սկզբունքները, քրիստոնեական վարդապետության հիմունք-

ները, որոնք դեռ առաջին դարերում անորոշ էին:

Աստվածաշնչի մեկնությունը կատարվում էր երկու ուղղությամբ.

1. այլաբանական (ձևական), միաստիկ բացատրություն:

2. բնական, պատմական (քերականական, տառացի) բացատրություն:

Այլաբանական մեթոդի կողմնակիցներն ընդունում էին Աստվածաշունչը որպես Աստծու բարձրագույն հայտնությունը, և աշխատում էին այն բացատրել, մեկնել հունական հին փիլիսոփայության:

Փիլոն Եբրայեցին (ծն. մոտ 30 թվականին մ. թ. ա., մահացած շուրջ 45 թվականին մ. թ.) Հին Կտակարանը մեկնում էր այլաբանական բացատրությամբ: Նա շատ մեծ ազդեցություն է գործել Աստվածաշնչի այլաբանական մեկնությամբ զբաղվող եկեղեցու վարդապետների վրա, որոնք հաճախ Ս. Գրքի պարզ խոսքերի տակ վերացական, ընդհանուր գաղափարներ էին որոնում և, հաճախ էլ խուսափելով բնագրային դժվարություններից, ընկնում ծայրահեղությունների մեջ:

Պատմական մեկնության կողմնակիցները այլաբանական մեթոդի «փրուն խոսքերի դեմ» հակադրում էին «Ս. Գրքի բնագրերի տառացի միտքը», հաստատուն և առողջ վարդապետությունը, «հետևողական աստվածաբանությունը»:

Բոլոր մեկնիչներն էլ իրենց հետազոտությունները կենտրոնացնում էին Ս. Գրքի ծագման պատմական հանգամանքների վրա: Մի հատվածում «ոգևորված, միաստիկական, այլաբանական իդեալականություն», մյուս կողմում՝ «զգաստ, բանական, պատմական իրապաշտություն»:

Աստվածաբանական հին դպրոցների, այդ թվում՝ Ալեքսանդրիայի, Անտիոքի, փոքրասիրական, կեսարական, տարբերությունները խորքում ուրիշ բան էին, եթե ոչ Աստվածաշնչի և նրա մեկնության տարբեր հասկացողություններ, բացատրության տարբերություններ:

Եթե ալեքսանդրյան դպրոցի աստվածաբաններն ու Ս. Գրոց մեկնիչները գտնվում էին Պղատոնի ազդեցության տակ, ապա անտիոքիները՝ Արիստոտելի, հետևելով իրենց մեկնողական ստեղծագործությունների լեզվին՝ նրա զգաստ, բանական ուղղության, տրամաբանական մտածողության կանոններին, և պահանջում էին հավատքի և դավանության հարցերում բանաձևերի պարզություն, հստակություն:

Աստվածաբանությունը, որպես հավատքի գիտություն, հիմնվում էր առանձնապես Ս. Գրոց մեկնության վրա:

Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը և նրանց թարգմանիչ աշակերտները, մեծ ուշադրություն են դարձնում հույն և ասորի եկեղեցական հայրերի ինքնուրույն երկերի, ճառերի, մեկնությունների թարգմանության վրա: Այսպես, հունական և ասորական եկեղեցական հայրերի կարևորագույն գրվածքները թարգմանվել են հայերեն: Օրինակ՝ Աթանաս Ալեքսանդրացու, Կյուրեղ Երուսաղեմացու, Եվսեբիոս Կեսարացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Նազիազանցու (աստվածաբան), Հովհան Ոսկեբերանի (Մեկնութիւն Մատթէի, Յովհաննու, 12 գլուխ) թղթոց Պողոսի, Իգնատիոս Աստվածազգացու, Պուլիկարպոս Զմյուռնացու, Սևերիանոս Գաբազացու, Ապոլինարի, Հոնոսի, Կյուրեղ Ալեքսանդրացու (Մեկնութիւն հնգամատենի), Պրոկղի, Եփրեմ Ասորու (Մեկնութիւն Ս. Գրոց, Համաբարբառ Աւետարանի), Հակոբ Սրուճեցու, Իրինիոսի և շատ ուրիշների գրվածքները:

Անհրաժեշտ է հատկապես նշել այն հանգամանքը, որ այդ թարգմանական գրականությունը այնքան ընդարձակ է եղել և կատարվել է այնպիսի ընտրությամբ և ճաշակով, որ ընդհանուր եկեղեցու գրականության մի շարք կարևոր երկեր մնացել են միայն հայերեն հին թարգմանությամբ և այսօր գիտության համար մատչելի են դարձել միայն հայերեն այդ հին թարգմանությունների միջոցով: Այսպես օրինակ, Փիլոն Եբրայեցու «Արարածոց»-ի, Օրիգենի «Հետականք»-ի մեկնությունները, Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն առ սահմանալսն ի ժողովոյն Քաղկեդոնի», Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմութիւն»-ը կամ «Քրոնիկոն»-ը, Արիստիդեսի «Զատագովութիւն»-ը, Իրինիոսի «Յոյցք առաքելական քարոզութեան»-ը և շատ ուրիշներ:

«Կարելի է ասել, որ ժամանակի եկեղեցական գրական տեսակներից և Կ. Պոլսի դպրոցներում գործածած ձևաբանություններից, ոչ մի նշանավոր երկ չեն թողել, որ չթարգմանեն, 5-րդ, 6-րդ և հաջորդ դարերում» (Աբեղյան, էջ 93):

Աստվածաշնչի և ընդհանրական եկեղեցու բազմատեսակ և բազմակողմանի գրական երկերի թարգմանությամբ ստեղծվել էր այն ամուր կովանը, հիմքը, որի վրա զարգանում էր հայ ինքնուրույն մատենագիտությունը՝ իր բոլոր գրական տեսակներով:

Մեր առաջին թարգմանիչները եղել են նաև Աստվածաշնչի մեր առաջին մեկնիչները:



Երկու մայրերի Սողոմոնյան դատաստանը
 (Մատենադարանի ձև. հ. 948, Աստվածաշունչ 1654—1660, Կ. Պոլիս, ծաղկող՝ Մարկոս):

«գամենայն ժամանակս իւրեանց յընթերցուածս զրոց ծախէին զտիւ և զգիշեր» (Կորնոն), որոնք խոսափելով միաժամանակ մեկնողական արվեստի մեջ այլաբանական (ներանց բառով՝ խորհրդական) մեթոդի ծայրահեղութիւններէն, և պատմական (ներանց բառով՝ նկարագրական) մեթոդի շորութիւններէն, հաճախ ճարտարորեն օգտագործել են երկու մեթոդները միասին, ինչպես Ստեփանոս Սյունեցին, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Ներսէս Լամբրոնացին իրենց մեկնողական ստեղծագործութիւններում:

Հայ մեկնիչների համար եւ Աստվածաշնչի բացատրութիւնը, մեկնութիւնը կրոնական մեծ նշանակութիւն ունեն, որովհետեւ Ս. Գրքի սխալ ընթերցումից, թյուր հասկացողութիւնից առաջ էր գալիս ամեն շարիք ու գաղափարական մոլորութիւն, որով մեր մեկնիչների համար ևս հիմնական հարցը Աստվածաշնչի գիտութիւնն էր և ուսումնասիրութիւնը:

Մեղ հասած մեկնողական գրականութեան հիմնական արժանիքը, աչքի ընկնող հատկանիշները, նրանց թափանցող, կենդանի ոգին է, կրոնական զգացմունքը, հավատքի ջերմութիւնը և Աստվածաշնչի խորը, բազմակողմանի իմացութիւնը:

Ե դարի մատենագիրների մեջ, ս. Սահակից և ս. Մեսրոպից հետո, առաջինը որպէս մեկնիչ հիշվում է Ծղիշեն, որին ընծայվում են «Մեկնութիւն Յիսուսայ և դատաւորաց» և «Մեկնութիւն Արարածոց» (այժմ կորած):

Կիրակոս Գանձակեցի (ԺԳ դար) վկայում է. «(Ծղիշէ) դրեաց զպատմութիւն Սրբոց Վարդանանց և զգիրս կանոնացն և այլ մեկնութիւնս Գրոց Սրբոց»: Նույնը վկայում է նաև Վարդան պատմիչ (ԺԴ դար Հայկական հին զպրութեան պատմութ., Վենետիկ, 1886, էջ 327):

Սյունյաց վարդապետաբանում, Արշարունյաց դպրեմանքում, Երասխաձոր վանքում, ուր կրթվում էին «ճարտարք և գիտունք հայոց», մեծ փութով ուսումնասիրում էին Աստվածաշունչը, որպէս ուսուցման հիմք փիլիսոփայութեան, քերթողութեան, և հոգևորական արվեստի:

Ստեփանոս Օրբելյանը (ԺԳ դար) վկայում է, որ Սյունյաց վարդապետարանի քերթողները միաժամանակ հռչակվել էին նաև որպէս «Հմուտք Ս. Գրոց և մեկնիչք», որոնք կարևորութեամբ ավանդում էին ս. Սահակից և ս. Մեսրոպից «Հրամայեալ զթարգմանութիւնն և զմեկնութիւնն»:

Առաջին մեկնիչը մեր եկեղեցական մատենագրութեան մեջ, որի ստեղծագործութիւնը հասել է մեզ ուտպագրվել, դա Ը դարու մատենագիր Արշարունեաց Բորեպիսկոպոս

«Ընթերցուածոց մեկնութեան» առաջին էջը

Գրիգորիսն է, որը կատարել է «Ընթերցուածոց մեկնութիւն»-ը՝ տպագրված Կյուրեղ Երուսաղիմացու «Կոչումն ընծայութեան» գրքի վերջում (Կ. Պոլիս, 1728), երեսունչորս գլուխների մեջ ամփոփված:

«Մեկնութիւն ընթերցուածոցն Կիրդի Երուսաղեմացույ գերաճաճանչ և սրբազան հայրապետի» մեկնութիւնը շուրջ 208 էջից և 34 ճառերից է բաղկացած: Աշխատութեան վերջում գետնդվել է «Յանգ լուծմանց իւրաքանչիւր ընթերցուածոց քառասորդաց պահոցն»:

«Ընթերցուածոց մեկնութեան» հիշատակարանում (էջ 205—208) խոսվում է աշխատութեան տպագրութեան մասին, որ «եղև ի յամի տեառն 1728 յամսեանն մայիսի 19-ի հայրապետութեան Ս. էջմիածնի լուսանկար և բարձրազահ Աթոռոյն, ղեկնեցի տ. Կարապետի սրբազան կաթողիկոսի ամենայն հայոց»: Տպագրութիւնը կատարվել է «արդեամբ և ծախիւք աղվերդի՝ որ է յերկրէն Սիւնեաց՝ հանգուցեալ պարոն Շահնաղարի որդի տիրացու պարոն Շահնաղարի»: Հիշատակվում են նաև տպագրատան «աշխատաւոր ծառաները», մահտեսի Մարտիրոսը և որդին՝ Սրապիոնը: Աշխատութեան «տպա-

զարկն» է եղել «տիրացու Տեվլէթն», իսկ «շարողը» ու կապարների ցրողը, «փոքրիկ աշակերտ տպագրանիս զՍտեփանն»։ Աշխատությունը լույս է ընծայվել Կ. Պոլսի գիտուն և աստվածաբան պատրիարք Հակոբ Նալլա-նի աշակերտ «բանասէր և նորընծայ» Հակոբ վարդապետի շանքերով։

1964 թվականին, Վենետիկում, Հ. Քերով-բե վրդ. Զրաքյանի աշխատասիրությունում, որպես հայկական մատենաշար, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության, վերահրատարակվել է Գրիգորիս եպս. Արշարունու «Մեկնութիւն ընթերցութեան»-ը, Գրիգոր բաղկացած է 204 էջից, 1—81 էջերը ներածութիւն են, 83—125 էջերը՝ բնագիրը, 217—220 էջերը՝ նյութերի ցանկ, և 220—224՝ ցանկ Ս. Գրեի վկայությունը։

Գրիգորիս եպիսկոպոսը եղել է իր ժամանակի նշանավոր վարդապետներից, հուշակված «փիլիսոփայական արուեստի», «հմուտ Ս. Գրոց»՝ ըստ Ասողիկի վկայության։ 695 թվականին եպիսկոպոս. մասնակցել է 725 թվականի Օձնեցու օրոք գումարված Մանազկերտի ժողովին և ստորագրել է ժողովի ատենագրության տակ որպես ժամանակի նշանավոր հայ վարդապետներից մեկը։ Մահացել է 730 թվականին։

Գրիգոր Արշարունի իր մեկնությունը գրել է Վահան Կամսարական իշխանի առաջարկով, ռզարկ բանիս զորս պահանջեր յինէն փութապէս յաղագս աստուածային ընթերցութեան, ով Կամսարական Վահան պատրիկ։

Սույն մեկնությունը «ընթերցութեան» է կոչվել, որովհետև ճառում է եկեղեցում պաշտամունքի ժամանակ և, մանավանդ՝ մեծ պահոց չորեքշաբթի և ուրբաթ օրերի աստվածաշնչական ընթերցումների բացատրության մասին։ Մեկնությունը ավելի ճառային, բարոյախոսական բնույթ ունի։ Բնաբանությունը մ' է ընթերցվածոց մեկնությունը։ Մենք հոն կրնանք գտնել նախկին գարեբու պահքի, ժամերգության, պաշտամունքի, հսկումի, ճրագալույցի, նավակատիկի ավանդությունները և Ս. Գրեի մասնավոր կտորներում ընթերցումը, հավատացյալները պատրաստելու դիտումով մարդեղության և Հիսուսի հարության գլխավոր տոներուն» (Հ. Քեր. Զրաքյան՝ Մեկնութիւն ընթերցութեան, Վենետիկ, 1964, ներածութիւն, էջ 17)։

Ստեփանոս Սյունեցու մեկնողական աշխատությունները

Ը դարի մեր եկեղեցական մատենագրության տիրական, բացառիկ դեմքերից մեկն է Ստեփանոս Սյունեցին՝ որպես աստվածա-

բան, փիլիսոփա, շարականագիր, քերականագետ, թարգմանիչ ու մեկնիչ Ս. Գրոց, Մեվել է 688 թվականին և սրտաճվիկ, եզերական մահով իր աչքերը փակել 735 թվականին։ Նախնական կրթությունը ստացել է Դվինի հայրապետանոցում, ապա կատարելագործվել Մաքենոցաց հուշակավոր Սուրբ և յաստուածաբան կրօնաստան վանքում ու Սյունյաց վարդապետարանում, «Յաղբիրն իմաստից՝ ի վարդապետարանն Սիւնեաց, որ գլուխ էր ամենայն գիտնոց հայոց» (Ստեփանոս Օրբելյան՝ Պատմութիւն նահանգին Սիսական, Փարիզ, Ա հատ., էջ 176)։ Սյունեցին այստեղ աշակերտում է հուշակավոր Մովսես Սյունեցուն և ապա դասախոս է կարգվում նույն վարդապետարանում Ս. Գրոց մեկնություն։

Այնուհետև Սյունեցուն հանդիպում ենք իր դասընկեր Գրիգոր Գոգիկ վարդապետի հետ Աթենքում և Կ. Պոլսում, ուր ուսումնասիրում են Աստվածաշնչի բնագրեր և մեկնություններ ու հմտանում փիլիսոփայության մեջ։ Սյունեցու մասին Օրբելյանը նորից վկայում է, որ Կ. Պոլսում «ոչ դադարէր երեք ի մեկ-նելոյ զգրեանսն Հին և Նոր կտառարանաց» (անդ. էջ 177)։ Նա Կ. Պոլսում զբաղվում է նաև փիլիսոփայական գրքերի թարգմանությունում։ «Ստեփանոս Սյունեցի իր թարգմանություններով կհանդիսանա Դիոնիսիոս Արիստագացիի գլխավոր թարգմանիչը հայոց մոտ» (Մեսրոպ վրդ. Գրիգորյան՝ Ստեփանոս Սյունեցի, Բելյուսթ, 1958, էջ 30), ինչպես նաև Կյուրեղ Ալեքսանդրացու աշխատությունների երկրորդ թարգմանիչը (Անդ., էջ 30)։

Ստեփանոս Սյունեցու մեծարժեք, բազմատեսակ մատենագրական վաստակի մեջ կարևոր տեղ են գրավում նրա մեկնողական աշխատությունները, որոնց մեծ մասը մեղ շեն հասել։ Սյունեցին «մեկնեաց և գրեանս բազումս, զԱրարածքն, զՅորն, զԵղեկիէն, զԴանիէն և այլ բազումս, որոյ բանքն նշանաւոր ի մէջ այլոց մեկնաց՝ փայլին որպէս ջահ աշծառ։ Արար և ճառս բազումս» (Օրբելյան)։

1951 թվականին լուսահոգի և մեծավաստակ Գարեգին կաթողիկոս Հովսեփյանցը հրատարակում է «Սյունեցու երկու նորահայտ մեկնությունները՝ «Մեկնութիւն Զորից Աւետարանաց» և «Մեկնութիւն Եղեկիէի» (Մեսրոպ վրդ. Գրիգորյան, Ստեփանոս Սյունեցի, էջ 3)։ Մենք ձեռքի տակ չենք ունեցել սույն երկու արժեքավոր աշխատությունները։ Երևանի պետական հանրապետական և մատենադարանի գրադարաններում տեսել ենք «Զորս Աւետարանների մեկնութիւն»-ի միայն առաջին 16 էջերը։ Ս. Մեսրոպ վար-

դապետը, որը տեսել է այդ երկու աշխատությունները, գրում է. «Զորս Անտարաններու մեկնութիւն» կոչված աշխատությունը, գլխավորաբար մեկնությունն է Մատթեոսի Ավետարանին: Ղուկասի և Հովհաննեսի Ավետարանները շատ համառոտ կերպով են մեկնաբանված, իսկ Մարկոսի Ավետարանը համարյա ամբողջությամբ (բացառելով ԺԴ գլխի 53-րդ համարը) չէ մեկնված, Մատթեոսի Ավետարանն քաղված համարվելով:

«Կատարված աշխատանքը քարոզախոսական չէ, այլ բնագրային-պարզաբանական: Հավանաբար Սյունեցի նպատակադրված էր Դվինի կաթողիկոսարանին դպրեմանքի աշակերտներուն ընծեռել հիմնական մեկնություն մը, որ օժանդակ ըլլար իրենց՝ Ավետարանի մեկնողական քարոզության զործին մեջ» (Անդ. էջ 49—51): Տպագիր աշխատությունը կրողականայ 140 մեծագիր էջերն. միասյուն՝ 17 (ստորիշյա ծանոթությունները ևս նկատի առնված). 11 սմտր: (էջ 32):

Սյունեցու նորահայտ երկրորդ աշխատությունը կոչվում է «Պատճառք և թելադրութիւն առաջի տեսլեանն Եղեկիելի»: «Սա բացատրությունն է Եղեկիել մարգարեի առաջին տեսլքին: ... Ստեփանոս Սյունեցի Եղեկիելի մեկնությունը տպված է Ավետարանչաց մեկնության հարակից (էջ 145—160): ... Միայն տպված է Եղեկիելի Ա գլուխին 1—19 համարներուն մեկնությունը»: (Անդ. էջ 69—71):

Գրիգոր Նարեկայ Վանից վաճառականի մեկնությունը Երզնգ երզոյն Սողոմոնի

Մեր մեկնողական դրականության առաջին ամբողջական և տպագիր աշխատությունը Գրիգոր Նարեկացու «Երզ երզոց»-ի մեկնությունն է:

Նարեկացու մատենագրական վաստակի մեջ այդ մեկնությունը առաջինն է ժամանակագրական տեսակետից: Մեկնության հիշատակարանում Նարեկացին նշում է, որ ինքը այդ մեկնության ձեռնարկել է «նիՉ թուականութեանս Հայոց» (426+551=977 թվականին), երբ ինքը դեռ շատ երիտասարդ էր, հավանաբար 25—26 տարեկան հասակում: Նարեկացին ծնվել է 940-ին և մահացել՝ 1003 թվականին):

Նարեկացին այդ պատասխանատու, ծանր, «հարկու բանիցն Սողոմոնի», այսինքն «Երզ երզոց»-ի մեկնությունը գրել է մի քանի անգամ հրաժարվելուց հետո, «աստուածասէր, քրիստոսապսակեալ արքայի», Գուրգեն Արծրունի Անձեաղաց թագավորի խնդրանքով, որովհետև՝ հաստատում է իր «հառաջաբան»-ի մեջ Նարեկացին, որ Գրիգոր Նյուսա-

ցին՝ «կատարեալ վարդապետն և հոգիաբնակն», չէր համարձակվել իր ժամանակում այսպիսի խորիմաստ գրքի մեկնության ձեռնարկել, «որչափ առաւել ես, որ ոչ նրա գիտությունն ունեմ և ոչ էլ աստվածադգեցիկ միտքն»: Վերջում, սակայն, ասում է Նարեկացին, ստիպվեցի, «հարկեցայ» գրել, «բացայայտել զսորին ծածուկսն որ ի նոսա, որ են քաղցր առ ի լսել»:

«Երզ երզոց»-ը Հին Կտակարանի գրքերի մեջ, իր քնարական շնչով, բանաստեղծական պատկերներով և արտահայտչական իրապաշտ միջոցներով, շատ ավելի մոտ է ժողովրդական-աշխարհիկ քնարերգության, և փորձիչ է սովորական ընթերցողի համար, եթե մաքուր զգացմունքներով այն չի կարդա:

Անձեաղաց արքունիքում, հավանաբար, այդ աշխարհիկ ոգով, «մարմնաւոր ցանկութեամբ» էին գնահատում «Երզ երզոց»-ը: Այդ զգացել է նաև Նարեկացին և համարձակությամբ հաստատել, որ, արդարև, «Երզ երզոց»-ում «գլխեայէ և ղհարսէ ասէ, որ և զստեանց և զկարմրացեալ շրթանց և զայտից գեղեցկութենէ և ղաչաց ցանկալեաց և ղքեռ և ղեղբորորդոյն և ղօրիորդաց՝ և ղայլն ամենայն այսպիսեաց բանից տոփականաց և սրտից խտղտանաց սեռն սիրոյ շողկապ միաւորութեան, զոր լուեալ մարզկան անիմանալեօք մտօք յայլ և յայլ իրս իմանային»: (Գրիգոր Նարեկացի՝ մատենագրութիւնը, մեկնութիւնը երզոց երզոյն Սողոմոնի, Վենետիկ, 1877, էջ 486):

Նարեկացին վկայում է, որ ինքը ծիծաղում էր այդպիսի թյուր, միամիտ կարծիքների վրա, բայց բարոյական-դաստիարակչական մտահոգությամբ ձեռնամուխ է լինում աշխատանքին, որը «յոյժ յանդգնութիւն էր ինձ այս»։ «Նախ խնդացի ընդ այս, որ այսպիսի միտս երեւցուցեր առ ի քննել զգիրս և հոգ տանել ուսմանց, և օտարանալոյ ի պիղծ հոգուց և ի վայրաբար քննութեանց և ի մեղսասէր բարուց»: Նարեկացին վշտով ու վրդովմունքով դատապարտում է նրանց, ովքեր «անասնական ցանկութեամբ», «գազանաբարոյ մտօք» են գնահատում «Երզ երզոց»-ը, մինչդեռ պետք է հրեշտակային, մաքուր սիրտ ունենալ, որովհետև «Երզ երզոց» նախ երբայեցեքեն նշանակում է օրհնութիւն օրհնութեանց» և ապա փնսայի ու հարսի պատկերի մեջ ներկայացնում է (կերպարանել) «գլխորհուրդս Քրիստոսի և եկեղեցւոյ... և ի ձեռն մարմնաւորացս տեսցուք զհոգեւորն»:

Այնուհետև Նարեկացին զարմանալի հմտությամբ խոսում է ընտանեկան, ամուսնական սրբության և սիրո մասին. «չիք յերկ»



Նարեկացու «Երգ երգոց»-ի մեկնությանը շապիկը (1877)

րի պատուականագոյն և առաւել քան զսէր առն և կնոջ: Նարեկացին չափազանց հետաքրքիր և իր ժամանակի համար հանդուգն միտք է արտահայտում, երբ ասում է, որ նախ Եվան խաբվեց՝ «պատրեցաւ և յանցեալ», ապա Ադամ «յաղագս ո՛չ բաժանելոյ ի կնոջէն եկեր զպտուղն և սիրելոյ զնա, այլ ո՛չ վասն աստուածանալոյ՝ որպէս կինն»:

Նարեկացու մեկնությունը հագեցված է մաքուր, բարձրագույն, զոհաբերվող, աստվածացնող սիրո քնքշությամբ, ընտանեկան օջախը սուրբ պահելու մտահոգությամբ: «Որ զգիրքս զայս ընթեռնու, պէտս ունի մաքրել և զխորհուրդս յամենայն մարմնաւոր ամուսնական մտածութեանց և ապա մխիլ ի լսելութիւն»՝ թեւադրում է մեծ Սուրբը:

Նարեկացու «Երգ երգոց»-ի մեկնությունը ունեցել է մի քանի տպագրություն: Առաջին անգամ տպվել է Վենետիկում՝ 1789 թվականին և ապա 1877-ին Մատենադպրութիւնէն ընդհանուր խորագրի տակ, Նարեկացու ալ աշխատությունների հետ, ինչպիսիք են՝ «Մատենան ողբերգութեան»-ը, «Պատմութիւն

Ապարանից խաչի», ներբողներ, դանձեր, տաղեր և ապա նույն տպագրված հատորում՝ մեկնությունը, որը գրավում է հատորի 389—486 էջերը:

Հատորի 486—487 էջերը՝ կազմում են մեկնության «Յիշատակարան»-ը:

Նարեկացու մեկնությունը «կամ ազգային բնիկ լեզվով և կամ թարգմանությամբ» ծանոթ է օտար հայագետներին, որոնք սքանչացեր են վրան: Գաղիացի աստվածաբան մը՝ Կուլիեմոս Վիլֆոլդ, կըսէ թէ Երգ երգոց գրոց այսպիսի ընտիր մեկնություն մը ուրիշ ազգի մը մեջ տեսնված չէ... Նարեկացին ուզած է գլուրիմաց ընել նույն սուրբ գրքին իմաստները կարդացող հասարակ անձանց և կանանց անգամ, որոնք եկեղեցյաց մեջ այս դիրքը լսելով ուրիշ մտքեր ու իմաստներ կուտային Հոգվույն Սրբո ազգեցությամբ ներշնչված ու հոգևորական նյութ ու նպատակ ունեցող այն խոսքերուն: (Հայկ. հին դպրության պատմութ. Դ—ԺԳ դար. ք տպագրութ., Վենետիկ, 1886, էջ 526):

Շնորհալիմ որպէս մեկնիչ

Ներսէս Շնորհալին իր վեհափառ եղբոր՝ Գրիգոր Գ Պահլավունու թեւադրությամբ գրել է Մատթեոսի ավետարանի մեկնությունը, այն հասցնելով մինչև Քի համարն 17, հինգերորդ գլխոյն, մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս:

Այնուհետև սույն կարևոր մեկնությունը շարունակել և ավարտել է Հովհաննէս Երզնկացին, որ և կոչի Մործորեցի:

Մատթեոսի մեկնությունը տպագրվել է 1825 թվականի մարտի 16-ին, Կ. Պոլսում, Աբրահամ ամիրա ակնեցու սեփական տպարանում, «ըստ ընտիր ձեռագրաց»: Մեկնությունը գրավում է 657 երկսյուն, մեծադիր էջեր:

Մեկնությունը բացվում է «յորդորակ ներբողական» ներածականով, ուր հրատարակիչը խոսում է «Նոր Մովսէս» նորոյս խորալէի՝ Ներսէս Շնորհալի» հայրապետի մեկնության նշանակության մասին «իբր յառաջաբանութիւն կամ դուռն յարմարեալ է մեկնութեան աւետարանին՝ որ ըստ Մատթէոսի, մեկնութիւն տասն խորանաց՝ նմանութեամբ տասնփեղկեան խորանին, զոր Մովսէս կանգնեաց և ծածկեաց զօրինակ խորհրդոյ ճշմարտութեան»:

Այնուհետև, հաջորդ 5—12 երկսյուն, մեծադիր էջերում բացատրվում է մովսիսական տասնաբանյա օրենքի և տասն խորանների նշանակությունն ու խորհուրդը մեկնողական արվեստի առնչությամբ:

U. S. S. R. U. N. I. O. N.

No. 12,000

U. S. G. L. N. O. T.

Երբ որ Դ. Բարսեղյանը և Գ. Բարսեղյանը
 Գ. Բարսեղյանը և Գ. Բարսեղյանը
 Գ. Բարսեղյանը և Գ. Բարսեղյանը
 Գ. Բարսեղյանը և Գ. Բարսեղյանը

§ 7-41-2. Law of the State of New York.

Վ. Խաչատուր Հրամանյան Տեառն Կարոտեմե, արժ. Էջմիածնի Եպիսկոպոսի Պատվոթոյգի Տոյրաբարձրի Կատարելագործութիւն

Ինքնամեծ հոգի Երեսման ամբողջի անհեղձ և անհոգ և անհոգ
հայրաների:



8-12. 8-12. 8-12. 8-12. 8-12.

1. The first is the *Principles of Geometry*, which is a treatise on the foundations of geometry, and is one of the most important works in the history of mathematics.

Մատթեոսի Ավետարանի մեկնության տիտղոսաթերթը

Ներքո ձեռնարկել է այսպիսի առաջարկություն
ըստ պատուասիրաբար քում հրամանի, գլուխ
պատուական լետ գլխոյն եկեղեցւոյ՝ հրդո-
րիոս պթողիկոս հայոցը։ Իսկ իր կատարած
աշխատանքի ընդլթի մասին համեստորեն

16—21 էջերում Շնորհալին նշում է, որ
ինքր Մատթեոսի մեկնությունն աշխատանք-

ակնարկում է «հաւաքել զտարածեալ բանս սրբոյն և դնել հանդէպ իւրաքանչիւրումն աւետարանականաց բանիցս՝ առ ի լինել դիւրնկալ ի միտս վարժողաց ուսումնասէր մանկանց... և է՝ զի զառ ի նոցայն միտս մերովս բանիւ յորժամ ընդարձակագոյն ճառիցեն բանք» (էջ 16)։

Ապա սկսվում է ըստ գլուխների և համարների Մատթեոսի ավետարանի առաջին հինգ գլուխների հոգեւոր մեկնությունը, մինչև 17-րդ համարը։ Շնորհալու մեկնությունը ընդգրկում է 106 էջ։

Մատթեոսի ավետարանի Ե գլխի 18-րդ համարից՝ «ամէն, ամէն, ասեմ ձեզ, մինչև անցցեն երկինք և երկիր», սկսվում է Մործորեցու մեկնությունը, որը գրավում է 103—625 էջերը։

Երդնկացին նախ նրկու էջում բացատրում է, որ ինքը շարունակել է Շնորհալու կիսատ թողած մեկնությունը՝ «լրումն թերոյն համառոտ տեսութեամբ սրբոյ աւետարանին որ ըստ Մատթէի աշխատացեալ վերլուծութեամբ ի սկիզբն, գեղեցիկ և հանճարեղ բանիւ, կորովամիտ և համեղաբան կաթողիկոսն տէր ներսէս Կլայեցի»։ Այնուհետև Երդնկացին կանգ է առնում համառոտակի այն հնարավոր պատճառների վրա, որոնք արգելք հանդիսացան Շնորհալուն շարունակելու իր մեկնությունը՝ «աստուածային գործոյս այսորիկ գործառնութիւն»-ը, «ոչ գիտելով եթէ ո՞ր աղագաւ եղև խափանեալ... վասն որոյ յոյժ ի վարանս մտեալ տազնապէի», գրում է Երդնկացին։

Երդնկացին ևս, շատ հետաքրքրվելուց հետո իսկ, չի կարողացել իմանալ բուն պատճառը, թե ինչու «եղև թերի մնացեալ» Շնորհալու գործը, և վկայում է, որ ինքն էլ վրիպել է «ստոյգ պատճառն» իմանալուց, «քանզի, ոմանք ղմահն ասացին խափանումն, այլք՝ զհոգ հայրապետական Աթոռոյն, և կէսք թէ՛ գրեաց և չէ՛ ի միջի»։

Այս պատճառաբանությունները համոզիչ չեն թվացել Երդնկացուն, և, այնուամենայնիվ, ինքը որոշել է շարունակել Մատթեոսի ավետարանի մեկնությունը և՛ ավարտել «ի վիճակ սուրբ առաքելոյն Թադէոսի՝ ի վանս Մործորու կոչեցեալ, ընդ հովանեաւ ս. Աստուածածնիս», ուր «ի յուսումն կրթութեան Աստուածաշունչ գրոց» հավաքված միաբանությունն ու աշակերտությունը խնդրում են շարունակել և ավարտել մեկնությունը։

Երդնկացուց առաջ ուրիշներ էլ ձեռնարկել են Շնորհալու մեկնությունը շարունակել, «սակայն ոչ էր կարգաւոր որպէս Սրբոյն»։ (Այիշան՝ Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 118)։

Երդնկացին իր մեկնությունն ավարտում է «ի թիւ մարդեղութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի հազար երեք հարիւր և տասն և վեց»։

Մատթեոսի մեկնության 626—657 էջերը կազմում են այբուբենական «ցանկ, նշանաւոր բանից մեկնութեան սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի, որ ըստ Մատթէոսի»։


658-րդ էջում հիշատակարանն է։ Տպագրության մեկենաս է ականցի Աբրահամ ամիրան, որի տպարանում էլ տպվել է։ Սրբագրիչներ՝ «մեծիմաստ վարժապետն Ասլանեան» և «ծառայ ծառայիցն Աստուծոյ և զօրհնեալ ազգիս հայոց անձնընծայ պաշտօնեայս՝ Անդրէաս վարդապետն ականցի»։ Տպագրության գործին իրենց աշխատակցությունն են բերել այլ «աշխատաւորներ», տպագրիչ «տիրացու Մարտիրոս, զմրահար (շարվածքի վրա՝ թանաք քսող) Մարտիրոս» և ուրիշներ։

Մատթեոսի ավետարանի մեկնությունը մեր եկեղեցական մատենագրության գոհարներից մեկն է, իր հոգեւոր և հոգեշահ բովանդակությամբ, խորիմաստ վերլուծությամբ, աստվածաբանական, ս. գրական, մատենագրական ծանոթագրություններով և կենդանի, պատկերավոր ոճով։

Շնորհալու և Երդնկացու՝ երկու մեծատաղանդ վարդապետների «քրտնաջան բազմաշխատութեանցն արգասիք», մեկնությունը գնահատվում է «իբրև լուցեալ ջահ և ղամբարափայլ ճրագ ի վերայ աշտարակի սրբոյ եկեղեցւոյ, որ պայծառացուցանէ զամենայն հաւատացեալս ի Քրիստոս»։ (Յիշատակարան, էջ 648)։

Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն եօթանց թղթոց կաթողիկեայց»

Աստվածաշնչի մեկնողական . դրականության նվաճումներից մեկն է, մեր եկեղեցական մատենագրության մեջ, Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն եօթանց թղթոց կաթողիկեայց»-ը, որը տպագրվել է 1826 թվականին, Կ. Պոլսում, աշխատասիրությամբ ականցի Անդրեաս վրդ. նարինյանի՝ Երուսաղեմի հայոց վանքի երկու ընտիր և հնագույն ձեռագրերի բնագրերի հիմամբ վրա, «արդեամբ» աստվածասեր Աբրահամ ամիրա ականցու։ «Վարեոր է դիտել տալ որ վարդապետը իր գործին համար օտար կամ ազգային որ և է առաջնորդ մը չէ ունեցած, նախնյաց աշխատություններու մեջ»։ (Եղիշե արքեպ. Դուրյան՝ Հայ մատենագրություն, Երուսաղեմ, 1933, էջ 200)։



«Կաթողիկեայց եօթանց թղթոց» մեկնության
տիտղոսաթերթը

Մեկնությունը բաղկացած է 702 երկսյուն, մեծագիր էջերից:

Գրքի առաջաբանում (էջ 3—4) Անդրեաս վրդ. Նարինյանը խոսում է գրքի հրատարակության հանգամանքների մասին և ապա ներկայացնում է համառոտ ակնարկի մեջ Սարգիս Շնորհալու՝ «հայոց իմաստասիրի և բաշ հոգևորի, ճոխաբան հեղինակի» կյանքը:

Սարգիս Շնորհալին աշակերտել է Շուղրի Կարմիր վանքում՝ Մտեփանոս Մանուկ վարդապետին՝ Գրիգոր Գ Պահլավունու ու ներսես Շնորհալու հետ:

Շնորհալի մակդիրը տրվում էր Շուղրի Կարմիր վանքի առավել աչքի ընկնող վարդապետներին, ինչպես ֆերթոզ մակդիրը՝ Սյունյաց դպրոցի լավագույն վարդապետներին, և իմաստասեր կոչումը՝ Շիրակի դպրեվանքի շրջանավարտներին:

Ասարգիսը Շնորհալի է կոչվել նաև նրա համար, որ «բանք նորա գոլով քաղցր յոյժ և լի՝ իմաստութեամբ»:

Սարգիս Շնորհալին իր հոգեկից մեկնությունը գրել է Շուղրի Կարմիր վանքում՝ առանձնության մեջ, «գերապանծ իմաստիւր,

չքնաղ քերթուածովք, ճոխ վարդապետութեամբ, աղղու յորդորականօք, ի թուին հայոց ՇՂԹ» (559+551=1150):

Սարգիս Շնորհալուն ընծայվում են նաև Եսայի մարգարեի, Նարեկացու աղոթքների մեկնություններ և մի ճառ՝ «Առաջատուրաց» պահքի մասին, Գրիգոր Գ Պահլավունու թեալադրութեամբ գրված:

Այս առաջաբանին հաջորդում է մի դար հետո ապրած Կարապետ «իմաստուն, հանճարեղ և բանասէր» վարդապետի «յառաջարանութիւն»-ը (էջ 5—9), որտեղ նույնպես վարքագրական բնույթի տեղեկություններով խոսվում է «կատարեալ պուստիկոս, եօթնաստեղեան ջահ, անշիջանելի, յաւէտ լուսատու Հայց. եկեղեցւոյ» Սարգիս Շնորհալու և նրա մեկնության հոգևոր, բարոյական առանձնահատկությունների և մանավանդ մեկնության լեզվական, ոճական առանձնահատկությունների մասին, «ոչ նուրբ բանիւր և ոչ գեղջուկ, այլ զմիջակն և զարքունականն գնալով ճանապարհ՝ դի դիրալուր և ախորժ լինիցի լսողաց» (էջ 6): Այնուհետև 10—11 էջերում Սարգիս Շնորհալու «յառաջաբանութիւնն» է, իր գործի հանգամանքների մասին, և որից հետո սկսվում են նոր Կտակարանի կաթողիկե յոթ, այդ թվում Հակոբոսի՝ 1, Պետրոսի՝ 2, Հովհաննեսի՝ 3 և Հուդա Հակոբյանի 1, թղթերի մեկնությունները, որոնք գրվում են գրքի 10—668 էջերը:

Սարգիս Շնորհալին իր կյանքի վերջին օրերին՝ 1166 թվականին, խմբագրել է նաև նույն մեկնության համառոտագրությունը՝ «յիշատակ ինձ և իմոցն, և ի վարժումն մանկանց նորոյ առաքաստի մօրս մերոյ» վերին Ծրուսաղէնի» (էջ 668—691), գահացում տալու համար այն ընթերցողներին, որոնք, ինչպես ինքն է հաստատում, «եթէ սղագունիցն հանդիպեն բանից, գերկայն և զբազմաբանն ի գովութիւն առնուն. և եթէ նախ երկայնագունիցն լինին լսող... զնուաղն բարւօք վարկանին և զօրավոր»:

692—701 էջերի վրա է «Ցանկ թէ ո՞ր բան թղթոյն կաթողիկեայց՝ ո՞ւր արդեօք կան եղեալ կամ թէ և ա՛յլ գլխաւոր բանք՝ խնդրոյ արժանիք»:

Մեկնության վերջին էջում (702) հիշատակարանն է, ուր նշվում է, թե սույն մեկնության ճշգրտագին խմաստիցն յոլովութիւն զովացուցանէ զսիրտ ընթերցողին և իբրեւ զլապտեր վառ՝ ջահաւորեալ պայծառացուցանէ զմիտս և զհոգիս»:

Այնուհետև հիշվում են մեկնության տպագրության մեկնասնները, սրբագրող Անդրեաս վարդապետը, ընկերը՝ եվդոկիացի տիրացու Խաչատուր վարժապետը, «որ աշխա-



Ղուկասու Ավետարանի մեկնություն տիտղոսաթերթը

տեցաւ նաև ի շինութիւն ցանկիս, տպագրիչ՝ տիրացու Մարտիրոսը՝ «ղմրահար» տիրացու Մանվելը և այլ «աշխատաւորք»:

Սարգիս Շնորհալու մեկնությունը «ունի իր մասնավոր արժեքը, որչափ ալ բնագիրները բանասիրաբար և ճիշտ հասկնալու առավելությունը պակսի անոր մեջ և մյուս կողմէ՝ կրոնա-բարոյական հարցերու շուրջ ճառած ատեն օգտված ըլլա Ոսկերեքանի կամ ուրիշ եկեղեցական-հայրերու հայ թարգմանություններն: Սարգիս վարդապետ, իր առաջադրության համաձայն, գլուխ հանած է իր մեկնությունը, ոչ «դժուարապատում և երազահանական» բառերու կիրարկումով, և ոչ ալ «գեղջուկ բանիւք» աղավաղելով իր բնագիրներուն իմաստն ու տեսությունը» (Դուրյան՝ էջ 201):

«Մեկնողական գրքի մը ամեն կարևոր հատկություններն ունի Սարգսի այս գրվածքը, ողջամիտ վարդապետություն, եռանդուն լեզու և բավական սուր քննադատություն, որոնցմով արժանավորապես հարգ գտած է» (Հայկ. հին դպրութեան պատմութ., Դ-ԺԳ դար, Վենետիկ, 1886, էջ 626):

Ինգնատիոս վարդապետի «Մեկնություն արքայ աւետարանին որ ըստ Ղուկասու» ինգնատիոս վարդապետը (Սև Լեռնցի) եղել է «ուսումնակից» Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի, ներսես և Սարգիս Շնորհալիների՝ Շուղրի Կարմիր վանքում: Կոչվել է «այրն սքանչելի և հոգելից»: Գրիգոր Պահլավունի կաթողիկոսը «անոր հմուտ, վարժ և աստվածաբան գրչին հանձնեց Ղուկասու ավետարանչին մեկնություն մի շարադրել» (Հայկ. հին գպր. պատմութ., էջ 623):

Ինգնատիոս նախ մերժում է կատարել հայրապետական թելադրանքը, ըստ Կիրակոս Գանձակեցու վկայության, համեստորեն պատճառաբանելով իր «մտաց չափավորությունն ու խոսքի անբավարարությունը»: Մի օր երազում ինգնատիոս վարդապետը տեսնում է, որ մի ընդարձակ և լուսավոր դարպասում բազմել են հայ եկեղեցու մեծ վարդապետները: Ինքը ևս փորձում է մոտենալ նրանց խմբին, բայց նրան չեն թողնում, տուրակելով, թե մերժել է հանձն առնել Ավետարանի մեկնությունը կատարել: Տեսիլքի բարոյական հարկադրանքի տակ, ինգնատիոս ղգացված, ձեռնարկում է Ղուկասի Ավետարանի մեկնությանը, «ոչ յոյժ խորին շարադրանօք և ոչ որպէս աշխարհօրեն, այլ ամենայն ինչ միջակ իմն ճանապարհաւ, քաղցր և ախորժ լսելեաց»:

Ղուկասի մեկնությունը տպագրվում է Կ: Պոլսում Աբ. Թերզյանի տպարանում, 1824 թվին, (451 էջ, երկսյուն):

Տպագրված մեկնության Բ և Գ էջերը կազմում են «այսուհանդերձ» նույն սուրբ վարդապետին ինգնատիոսի առ սուրբ կաթողիկոսն հայոց Գրիգորիս», որտեղ մեկնիչը իր ընծայական խոսքը ուղղում է «քահանայապետական գլուխ և սին հաստատութեան եկեղեցւոյ» Գրիգոր Գ Պահլավունուն և ապա հանգամանորեն կանգ է առնում Ղուկասի անձի և նրա Ավետարանի պատմական նշանակության և Ավետարանի առանձնահատկությունների վրա, բովանդակության, ոճի տեսակետից այն բաղդատելով հատկապես Մատթեոսի Ավետարանի հետ. «Ղուկաս ի հեթանոսաց ընտրեցաւ աշակերտ և աւետարանիչ: Արդարեւ, սքանչելի է առաւելութիւնն զօրութեան նորա ի մեզ հաւատացեալս»: Այնուհետև Պողոս առաքյալին և Ղուկասին համեմատում է միմյանց հետ, շեշտելով, որ նրանք, աստվածային մասնավոր շնորհների արժանանալով, մեծ դեր են կատարել իրենց գրվածքներով, թղթերով և քարոզությամբ, աշխարհում քրիստոնեական կրոնի հաղթանակի համար, բերելով «վկայութիւն հրէից և հեթանոսաց, վասն աստուածութեանն Քրիստոսի»:

Ապա սկսվում է Ղուկասի Ավետարանի մեկնությունը գլուխ առ գլուխ, համար առ համար:

Մեկնության վերջում, «Յայտարարութիւն ինչ առ ընթերցող եղբարսդ վասն սրբոյ մատենիս և հեղինակի և տպեցման» բաժնում, խոսվում է նախ մեր մեկնիչների աշխատանքների հոգևոր արժանիքների մասին: Աստվածաշնչի գրքերի մեկնիչները համարվում են «մեր հարք, մեր մարք, մեր դայակք, մեր հովիւք, առ ի սնուցանել զմատաղ մանկութիւնս մեր յաճումն հոգևոր հասակի վերստին ծննդեան»:

Մեկնությունը տպվել է մահտեսի Հակոբ «ամուճայի» միջոցներով՝ 1824 թվականին: Հիշատակվում է նաև «յարաշխատ գործունեայ տպագրատանս, մահտեսի Աստվածատուր, տիրացու Հովհաննես, «աշխատավոր մշակ» վանեցի Սարուխան»:

Մեկնության վերջին էջում տպվել է նաև Հերոնիմոսի «Նախագրութիւն սրբոյ աւետարանին, որ ըստ Ղուկասու», և որին հաջորդում է այբբենական ցանկը:

Ղուկասի մեկնության լեզուն ղևհատվում է որպես «կանոնավոր և կոկիկ» (Դուրյան, էջ 219), իսկ բովանդակությունը «վարպետ դրվածքի մը ամեն կարևոր հանգամանքը պահած է. ընտիր ոճ, գեղեցիկ լեզու և մեծ հմտություն սրբազան դրոց... որ աստվածաբանական և մեկնողական գրքի մը համար ամենահարկավորն է... միջին ոճ մը բունած է հեղինակս. ոչ խիստ երկայն՝ որ բառից շատության մեջ իմաստները կորսվին, և ոչ այնչափ համառոտ՝ որ սուրբ գրոց մեկնության հարկավոր տեղվանքը անբացատրելի մնան» (Հայկ. հին դպրութեան պատմութիւն, էջ 624): Այնուհետև, ինչքան էլ գեղեցիկ լինեն մեկնությունները, նշում է Ինդնատիս վարդապետը, անգերազանցելի են մնում ավետարանների խոսքերի, առակների զորությունն ու իմաստը:


Ինդնատիսին է ընծայվում նաև «Գործք Առաքելոց»-ի մեկնությունը:

Ներսէս Լամբրոնացու մեկնողական աշխատությունները

ԺՅ դարի մեր եկեղեցական մատենագրության պայծառ և տաղանդավոր դեմքերից մեկն է Ներսէս Լամբրոնացին, որպես մատենագիր, աստվածաբան, հոգևոր, թարգմանիչ, մեկնիչ և եկեղեցական գործիչ:

Լամբրոնացին ծնվել է 1153 թվականին: Որդին էր Լամբրոն բերդի Օշին իշխանի: Մայրը՝ Շահանդուխտ Պահլավունին, աղուստր եղբոր Շնորհալույն:

Լամբրոնացին իր կրթությունը ստանում է Սկևռա վանքում: Նրա առաջին ուսուցիչն ու



«Երկուտասան մարգարեից» մեկնության տիտղոսաթերթը

դաստիարակը եղել է մայրը. «վարժեալ էր ի մանկութեան ջանիւք մօր իւրոյ զհելլենացի զիրն»:

Լամբրոնացին տիրապետում էր նաև լատիններեն, ասորերեն, եբրայեցերեն լեզուներին և, հավանաբար՝ արաբերենին: Այնուհետև կատարելագործվել է Հոռմկլայի հայրապետանոցում՝ Շնորհալու շնչի և ղեկավարության տակ: Վարդապետ է ձեռնադրվում Շնորհալուց՝ 15 տարեկան հասակում, և նվիրվում դրականության: 1175 թ. եպիսկոպոս է ձեռնադրվում Տարսոն քաղաքի վրա՝ Գրիգոր Դ Տղա կաթողիկոսից, երբ 23 տարեկան էր:

«Լամբրոնացին, իբրև մատենագիր, անհավասար է իրեն ժամանակակից գրողներուն մեջ» (Դուրյան, էջ 208):

Լամբրոնացին վաղ տարիքից զբաղվում է նաև մենկողական ստեղծագործ աշխատանքներով:

24 տարեկան հասակում Տավրոսի լեռանց առանձնության և հոգեկան անդորրության մեջ գրեց հոյակապ, հոգեկից «Մեկնութիւն պատարագի»-ն և այնուհետև Աստվածաշնչի գրքերի բովանդակալից մեկնություններ, «քաղցր բանիւք և առատ մտօք, որ և հաճելի էր գիտնականաց», ճոխացրեց մեր

մատենագրությունը: «Յամենայն երեկոյի, մինչև ալիքին մոմեղէնք, գրէր և ապա անդէն յաթօն իւր նստեալ, սակաւ մի ննջէր, և իսկոյն յարուցեալ երթալ յեկեղեցի... և այսպիսի ըննազօս հնարիւք խաբեաց զմահ և գէթ տասն ամ դողացեալ ի թմրութենէ քնոյ, ծախեաց զնոյն ի խովմունս և ի լուծմունս աստուածաշունչ տառից»:

Լամբրոնացու գրչին են պատկանում բարձրարժեք հոգեկից մեկնություններ, այդ թվում՝ Արարածոց, Առակաց, Ժողովողի, Իմաստութեան, Երգ երգոց, Երկոտասան մարգարէից, Սարմոսաց, Դանիէլի, Մատթէի, Կաթողիկե թղթոց, Յովհաննու Յայտնութեան:

Այս մեկնությունները գրվել են երիտասարդական տարիքում՝ նրա հոգևոր և իմացական ուժերի հասունության շրջանում: Որովհետև Լամբրոնացին իր պայծառ կյանքը կնքել է 46 տարեկան հասակում՝ 1198 թվականին:

Մեկնություններից հրատարակվել են մի քանիսը: Մենք ձեռքի տակ ենք ունեցել միայն «Մեկնութիւն երկոտասան մարգարէից»-ը և «Յայտնութեան» մեկնությունը:

Լամբրոնացու «Մեկնութիւն սրբոց երկոտասան մարգարէից»-ը գրված է «ուղղափառ վարդապետութեամբ և լուսաւոր բանիւք՝ յօգուտ մանկանց կաթուղիկէ սրբոյ եկեղեցւոյ»: Տպագրվել է «ըստ ընտիր օրինակաց» 1825 թվականին՝ Կ. Պոլսում՝ աշխատասիրութեամբ Տ. Անդրեաս վարդապետ Նարինյանի:

Մեկնությունը բաղկանում է 241 երկսյուն, մեծադիր էջերից: Սույն մեկնությանը կցվել է նաև «Վարդանայ վանական վարդապետի» «Մեկնութիւն Դանիէլի մարգարէի» համառօտ և լուսաւոր մտօք» (էջ 242—280):

Հրատարակչի «Յառաջաբանութիւն» ներածականի մեջ նշվում է, որ «յոբում մեկնութեան գտանիցի հոգի խաղաղութեան, հեզութեան, և սիրոյ, ա՛յն է անտարակոյս՝ բարին և հաճոյն և կատարեալն, առաջի Աստուծոյ և սրբոյ եկեղեցւոյ նորա»: Լամբրոնացու սույն մեկնությունը ևս արդարորեն գնահատվում է որպէս այդպիսին, «մատեան լուսաւոր, բազմածաղիկ բուրաստան հոգևոր և պարտէզ իմանալի տնկոցն պտղաւոր», որը «ուսուցանէ մարդկան ուղղութիւն վարուց, առ ի զհաւատս կենդանացուցանել»:

Լամբրոնացին համարվում է «առաքելաշաւիղ հայրապետ, բերան քարոզութեան սրբոյ եկեղեցւոյ և գրիչ վարդապետութեան Հոգւոյն Աստուծոյ, շատագով ճշմարտութեան եկեղեցւոյ»:

«Երկոտասան մարգարէից» մեկնությունը տպվել է Կ. Պոլսում՝ Հովհաննես Կոլոտ պատրիարքի և «ի գրեանց մայր դպրատան

յօրթագիւղի» երեք հնագույն և ընտիր ձեռագրերի հիման վրա, «յօգուտ ազգին», «արդեամբ և ծախիւք» ակնեցի մահտեսի Աբրահամ ամիրա Թերդյանի, աշխատասիրութեամբ ակնեցի Անդրեաս վրդ. Նարինյանի:

Այնուհետև, 5-րդ էջից մինչև 241 էջը մեկնությունն է:

Մեկնությունից առաջ, մեկ առանձին թերթի վրա, ներսես Լամբրոնացու մեծադիր նկարն է՝ եպիսկոպոսական լրիվ զգեստավորման մեջ, խույր ի գլուխ, հովվական գավազանը ի ձեռին, կանգնած եկեղեցու ատնում, առաջնորդական Աթոռի առաջ՝ պատվանդանի վրա, քարոզելիս և օրհնելիս իր վարդապետ և քահանա աշակերտներին, որոնք ծնրադիր ու հափշտակութեամբ լսում են Լամբրոնացուն: Նկարի ներքև կա հետևյալ երկտող ձոնը.

«Ներսէս եղև Փրկչին պատկեր, երկնից ուղին՝ միշտ հրաւէր, Սովեալ հոգւոց՝ հաց հաստատէր, էին փառաց՝ արժանս առնէր»: (Ներքևը ստորագր. նկչ՝ Յակօբ):

Մեկնության 5-րդ էջի գլխավերևում, որպէս գլխազարդ, երկշարք գրվել է Հին Կտակարանի հայտնի նահապետների, մարգարեների դիմանկարները: Երկրորդ շարքում՝ տասներկու մարգարեների նկարներն են:

Մեկնությունը սկսվում է հետևյալ ծանոթագրութեամբ.

«Սրբոյ Հորն մերոյ տեառն ներսէսի Լամբրոնացւոյ՝ որ քեռ որդի էր սրբոյն Ներսէսի Ենորհալտյն յազգէ պահլաւունեաց: Արարեալ մեկնութիւն երկոտասան Մարգարէիցն՝ զոր ի թելագրութենէ արքայ Եփրեմի խուրի ասորւոյ և Կիրդի ազէքսանդրացւոյ և յիւրոց յաւելուածոց մտաց գեղեցկայարմար յեռեալ՝ իբր ոսկի ընդ սարդիոնն»:

Այնուհետև, գլուխ առ գլուխ և համար առ համար մեկնությունն է՝ Ովսե մարգարեի 14, Ամովսի 9, Միքիայի 7, Հովելի 3, Աբդիու 1, Հովնանու 4, Նավումի 3, Ամրակումի 3, Սոփոնիայի 3, Անգեոսի 2, Զաքարիայի 14, և Մաղաքիայի 4 գլուխ մարգարեություններին:

Սույն գրքում որպէս հավելված (242—280 էջերում) տպագրվել է «մեկնութիւն Դանիէլի մարգարէի, արարեալ ի վարդանայ վանական վարդապետէ՝ համառօտ և լուսաւոր մտօք»:

281—303 էջերում ցանկ է՝ «Բանիցն մարգարէութեանցն սրբոյ Դանիէլի և սրբոց երկոտասան մարգարէից»:

304 էջում «յիշատակարան»-ն է: Դանիէլի մեկնությունը նույնպէս տպագրվել է ակնեցի Աբրահամ ամիրա Թերդյանի մեկենասութեամբ, նույն տպարանում՝ 1826 թվականին:

Անդրեաս վարդապետի աշխատասիրությամբ ու աշխատակցությամբ Աբրահամ վարդապետ կոստանդնուպոլսեցու Գիրքը շարել է «տիրացու Մանուել, զգրահար»-ը՝ Յակօբ»։

Լամբրոնացին ունի նաև մեկնողական մի կարևոր աշխատություն։ Դա Հովհաննու ավետարանչի «Յայտնութեան» մեկնությունն է։

«Յայտնութեան» դիրքը հայ կանոնի մեջ մտցնելը վերագրվում է Լամբրոնացու աշխատանքներին։

Նովհաննու «Յայտնութեան» գրքի կանոնականության մասին վաղուց վեճ կար, ինչպես ընդհանուր եկեղեցու, այնպես էլ հայ եկեղեցու մեջ։ Ոմանք այդ դիրքը ընդունում էին «Թիթի կանոնական դրոց Աստուածաշնունչ Մատենի», մինչ ուրիշները մերժում էին։ Երկար վեճերից հետո, եկեղեցու մեծ վարդապետների ազդեցությամբ «Յայտնութեան»-ը անցավ Ս. Գրոց կանոնի մեջ, Հայ եկեղեցու մեջ, սակայն, երևում է, որ վեճը շատուկավել է մինչև Լամբրոնացի և նույնիսկ նրանից հետո էլ։ Այնուամենայնիվ, Լամբրոնացին շատ մեծ զործ է կատարել նոր Կտակարանի գրքերի կանոնի մեջ ընդունել տալու համար «Յայտնութեան» գրքի հարազատությունը և կանոնականությունը, «Ի Դասակարգութիւն Առաքելական Մատենիցս, որպէս արդարեւ առաքելական Յայտնութեան», ինչպես ասում է Լամբրոնացին։ (Ֆրեդերիկ Մուրատ՝ Յայտնութիւն Յովհաննու, Հին հայ թարգմանութ., Երուսաղեմ, 1905—1911, էջ 125)։

Այս առթիվ Լամբրոնացին վերանայում է, սրբագրում՝ Սահակ-Մեսրոպյան հին հայերեն թարգմանությունը «Յայտնութեան», որովհետև «օրինակն թուի բազում մասամբ աղաւաղեալ» (էջ 126)։ Լամբրոնացին նշում է. «ստուգաբան արարաւ՝ վերստին յերկրեալ հելլենացւոյն, իմով նուաստ ներսէսի թարգմանութեամբ, ընդ որ և զքննութեամբ մեկնութիւն սորին ածի յեկեղեցիս հայոց»։ (Յիշատակարան, էջ 19)։

«Յայտնութեան մեկնութիւն»-ը տպագրվել է Երուսաղեմում, ս. Հակոբյանց տպարանում՝ 1855 թվականին։ Գիրքը բաղկացած է 324 էջից։

«Յառաջաբան»-ում խոսվում է, որ մեկնության տպագրության համար օգտագործվել են երեք ձեռագրեր, որոնցից հնագույնը ընդօրինակվել է Կարին քաղաքում՝ «ի հնագոյն ձեռագրէն Յովհաննու Երզնկացւոյ... Ի թիւ 906 ի քսանութին մարտի ամսոյ» (755+551=1306)։

Այա 2—6 էջերում տպագրվել է Կ. Պոլսի հունաց պատրիարք Թեոֆիլոսի նախագա-

հույթամբ գումարված եկեղեցական ժողովի որոշումը, ուր ընդունվել է և՛ «Յայտնութեան» գրքի կանոնականությունը՝ «զարդարեւ Յիսուսի Քրիստոսի յայտնութիւն», և՛ նրա մեկնության ուղղափառությունը, «նաև տեսութիւն մեկնութեան և սորին քննութիւնն»։

«Յայտնութեան» սույն մեկնությունը դրել են կապադովկյան Կեսարիայի երկու հույն մետրոպոլիտները՝ Անդրեաս Կեսարացին (2 գար) և Արեթաս Կեսարացին (Ժ գար)։ (Ն. Ս. Անասյան՝ Հայկական մատենագիտություն, Ա հատ., Երևան, 1959, էջ 870)։

Ամբողջ մեկնությունը բաղկացած է 24 ճառերից և 72 գլուխներից, 6—10 էջերում տպվում է ցանկը սույն 72 գլուխների։ Այնուհետև սկսվում է բուն մեկնությունը (էջ 11—318) հետևյալ ներածականով, «ի յայտնութիւն Յովհաննու Սրբոյ Հօրն մերոյ Անդրէի երանելի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացւոյ համառօտ տեսութիւն։ Ընդ նմին և Արեթաս եպիսկոպոս նմին քաղաքի։ «Յաստուածային խորհրդական Բանիցն անհասութիւն ոք հայելով՝ մի՛ բամբասեցէ զմերս համարձակութիւն, որք բուն հարաք զսոյն իմանալ...»։

Սույն մեկնությունը Լամբրոնացու ձեռքն է ընկնում Բարսեղ անունով մի հույն վանականի միջոցով, երբ Լամբրոնացին գտնվում էր Անտիոքում։ Լամբրոնացին այն վերցնում է իր հետ և Հռոմկա վերադառնալուց հետո ներկայացնում այն Գրիգոր Դ Տղային։ Կաթողիկոսի հանձնարարությամբ մեկնության թարգմանությունը վստահվում է Հռոմկայի հայրապետանոցում հավանաբար որպես թարգման գտնվող Կոնստանդ հույն մետրոպոլիտին, որը ծանոթ էր նաև հայերենին։ Լամբրոնացին գրի է առնում մեկնության հայերեն թարգմանությունը 1179 թվականին՝ Հռոմկայի ժողովի տարին։ Լամբրոնացին իր աշխատանքի մասին նշում է մեկնության հիշատակարանում, որ թարգմանությունը «սրբաբանեցաւ քերթողական արհեստիւ ի յապահով անապատ ի սուրբ Գէորգ, ի մեջ լերինս Տորոսի... ձեռամբ նուաստ եպիսկոպոսի նորին մայրաքաղաքի Տարսոնի՝ տառապելոյս ներսիսի»։ (Յիշատակարան, էջ 324)։

Լամբրոնացին մեկնությանը կցել է երկու «Յիշատակարան»։ Առաջինը՝ էջ 319—321, ուր խոսում է «Յայտնութեան» գրքի կանոնականության և հարազատության մասին՝ վկայակոչելով եկեղեցու հին, նշանավոր հայրերին, այդ թվում՝ Դիոնիսիոս Արիսպագու, Իրինիոսի, Գրիգոր աստվածաբանի, Գրիգոր Նյուսացու, Կյուրեղ Ալեքսանդրացու,

Օրիգինեսի և ուրիշների վկայությունները, որոնց հիման վրա «Յայտնութիւն»-ը «դասեաց ի կարգ աստուածաշունչ նորոց կտակարանաց, որոց եղեալ և մեք ընթացակից՝ ի սուրբ եկեղեցւոյ մանկունս աւանդացաք զսոյն ի դասակարգութիւն առաքելական մատենիցս» (էջ 319):

Երկրորդ «Յիշատակարան»-ում (էջ 321—324) Լամբրոնացին խոսում է այն մասին, թե ինքը ինչպես գտավ «Յայտնութեան» մեկնությունը, բերավ և ներկայացրեց Գրիգոր Դ Տղա կաթողիկոսին, և գիրքը թարգմանվեց հայերենի թի թուին հայոց ՈՒԸ (628+551=1179), ի սուրբ և ի հայրապետական Աթոռն՝ որ կոչի Հոռմկլայ... ընդ հովանեաւ աստուածընկալ նշանին Վանկոյի» (էջ 32), Լամբրոնացին նշում է, որ «Յայտնութեան» մեկնությունը թարգմանվել է «ի լուսաւորութիւն հոգեոց»:

ԺԲ դարից հետո էլ մեկնողական գրականությունը շարունակում է մնալ մեր եկեղեցական մատենագրության կարևոր տեսակը:

Հանդես են գալիս Աստվածաշունչ Ս. Գրոց նոր մեկնիչներ, որոնք շարունակում են հին մեկնողական ավանդությունները և մեր մշակույթի գանձարանը հարստացնում նոր գանձերով:

Բազմավաստակ մատենագետ և բանասեր Հակոբ Անասյանը իր «Հայկական Մատենագիտություն» աշխատության մեջ (Երևան, Ա հատոր, 1959) «Մատենագիտական բնագրեր» ընդհանուր խորագրի տակ հրատարակված իր ուսումնասիրության մեջ՝ ԺԶ ժէ, ԺԸ, ԺԹ ենթախորագրերի ներքո, բազմաթիվ ձեռագրերից քաղվածաբար, բերում է չորս հաջորդական ցանկեր մեկնիչների և նրանց գործերի մասին. (էջ LX—LXIV), «վասն մեկնողաց Աստուածաշունչ գրոց ի մերոց վարդապետացն, թէ՛ ո՞վ ոք է արարեալ» կամ «վասն համառոտողաց Ս. Գրոցս, թէ՛ ո՞վ են արարեալ ղլուծմունս և՛ քաղուածս գրոցս»:

Այդ ցանկերում հաճախ կրկնվում են և՛ մեկնիչների անունները և՛ նրանց մեկնողական գործերը, որովհետև քաղված են տար-

բեր ձեռագրերից և տարբեր ժամանակներում:

Այդ մեկնիչների մեջ հիշատակվում են Անանիա վարդապետն «ի Սանահին վանացն, այր մտաւոր և հանճարեղ, աստուածայնոց գրոց մեկնիչ» (Կիրակոս Գանձակեցի), որին ընծայվում են Պողոս առաքյալի 14 թղթերի մեկնությունը՝ Եփրեմի և Ոսկեբերանի հետեւողությամբ, և Մատթեոսի մեկնությունը:

Վարդան վարդապետ (մեծ) դրել է Արարածոցի, Սաղմոսի, Երգ երգոցի և Դանիելի մեկնությունները: Մխիթար վարդապետ Գոշ՝ Երեմիայի: Վանական վարդապետ՝ Հորի: Վարդան (Երկրորդ) վարդապետ՝ չորս Ավետարանների. Բարսեղ վարդապետ՝ Ժոն՝ Մարկոսի (Երկու հատոր, տպագրված). Գրիգոր վրդ. Գանձակեցի՝ Ընթերցվածոց. Եսայի վրդ. Նշեցի՝ Եսայիի և Եղեկիելի. Կիրակոս վրդ. Գանձակեցի՝ Հովհաննու Ավետարանի. Հովհան Որոտնեցի՝ Հովհաննու Ավետարանի. Գրիգոր Տաթևացի՝ Սաղմոսի, Առակաց, Երգ երգոցի, Իմաստության, Ժողովողի, Հորի, Մատթեոսի և Հովհաննու Ավետարանների. Մատթեոս վրդ. Զուղայեցի՝ աշակերտ Տաթևացու, Ղուկասու, Հովհաննու և Գործք առաքելոցի. Գևորգ վրդ. Երզնկացի՝ աշակերտ Որոտնեցու, Եսայիի. և այլ բաղում մեկնիչներ:

1965 թվականին Երևանում հրատարակված «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի», Ա հատորում, «Ընդհանուր ցանկեր» բաժնի «Մեկնողականք» խորագրի տակ, «Մեկնություն, Լուծմունք, Սուրբ և ծիսական գրեանց» ենթախորագրի ներքո, հիշատակվում են մեկնողական գործերի հարյուրավոր ձեռագրեր (էջ 1399, 1416), որոնք սպասում են իրենց ուսումնասիրողներին և հրատարակիչներին:

Ինչպիսի՞ անկրկնելի հոգևոր, մշակութային գանձեր կան անթեղված Աստվածաշնչի գրքերի մասին՝ ձեռագիր այդ մեկնությունների մեջ, որոնց հրատարակությունն ու ուսումնասիրությունն, անկասկած, է՛լ ավելի կհարստացնեն մեր հոգևոր մշակույթի գանձարանը:

